

Տարեկան դիմել 10 բրաբլ, կես տարվան 6 բրաբլ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

ՄԵԼԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիցիտով.

Հայտարարութիւնները համար վճարում են.
Իր բաժանցիւր բառին 2 կոպեկով.
Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԺՐՈՒՆԻ

Ամսիս 22-ին վաղժանովն իշխանուէր

ՍՕՓԻԱ ՍՕԼՈՄՕՆԵԱՆ ԽՕՀԱՄԻՆԱՍԵԱՆՑ

Սրա մասին ցաւօք սրտի յայտնում է իր ազգականներին և ծանօթներին հանգուցեալի ամուսինը՝ ինծիներ զենեալ իշխան Թարխան Աղամալեան Խօջամիսանցանց իր որդիներով: Ամբողջ չորեքշաբթի օր, օգոստոսի 25-ին, երեկոյան ժամը 7-ին, իսկ յաղարկաւորութեան հանդէսը լինելու է օգոստոսի 26-ին, առաւօտեան ժամը 10-ին, տեղական տուն (Սուրբ Գրիգոր, № 46) գէպի Մարտիկ. Գէորգ եկեղեցին, իսկ թաղումը Խօջիմանի զերեկամատանը: (Ե. չ.) 2—2

Գրիգոր, Արշակ, Յակոբ և Աննա Ստեփանեանցները ու Նատալիա Ստեփանեանցը, սրտի խորը կսկիծով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջին երեքը՝ իրանց թանգազին մօր, չորրորդը՝ սկեռնի և վերջինս իր բազմեղանի տալի:

ՍՕՓԻԱ ԲԱԼԱՆԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

Մահը, որ տեղի ունեցաւ կիրակի առաւօտը, ամսիս 22-ին: Թաղման յաղարկաւորութիւնը տեղի կունենայ հինգշաբթի օր, առաւօտեան ժամը 10-ին իր բնակարանին, որ գտնւում է Գառնիկայա փողոցում, տ. № 22, դէպի Վանքի մայր եկեղեցին, իսկ այդտեղից Խօջիմանի զերեկամատանը: Ամբողջ՝ երեքշաբթի և չորեքշաբթի երեկոյներ ժամը 7-ին: 2—3

ԲՈՎԱՆԻԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Նախօրոք հոգաւորութիւն.— Ներքին Տեսութիւն, Մարտի, Նամակ Վաղարի գաւառից: Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.— ՀԱՌԱՅԻՒՆՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻԱՎԱՆ. Խայեամ բանաստեղծը:

ՆԱԽՕՐՈՔ ՀՈԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Նորագոյն հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ մեր երկրի գիւղատնտեսական արդիւնագործութեան ամենակատարի թշնամիներէ մէկը, այն է ֆիլօքսեր:

ԲԱՆԱՍԻԱՎԱՆ

ԽՕՑԵԱՄ ԲԱՆԱՍԵԱՆԸ

(Պարսկական զբաղանութիւնը)

Հաւատարմացած եմ, որ մեր մէջ, նոյն իսկ մեր գրականագէտներին և գրողներին մէջ, շատ քիչ անձինք լսել են Խայեամի անունը և ծանօթ են նրա հռչակաւոր բառերին երկրի հետ: Նստակայն Օմար Խայեամի, XI-րդ դարում ծաղկող պարսից այդ մեծ իմաստասէր-գրողի բանաստեղծութիւնները, որոնք յայտնի են լեռնային լեռներից (կամ պարսկերէն՝ Բուրսայեամ Խայեամ, Les quatrains de Khayyam) անունով, որովհետև գրված են չորեքտողեան, այնքան մեծ հռչակ են ստացել Եւրոպայում վերջին քսան տարվայ ընթացքում, որ ոչ միայն թարգմանվել են ֆրանսիական, գերմանական, անգլիական լեզուներով, այլ և Լոնդոնում կազմվել է Խայեամիստների կոլեքտիւնը ամբողջ մի ուսումնական ակումբ, որի միակ նպատակն է ուսումնասիրել և ընդհանրացնել Խայեամի բանաստեղծութիւնները:

Պարսկական գրականութիւնը (մի կողմ թողած չինը), սկսած Ֆրեդոստը մինչև XVII դարը, շատ և շատ թանգազին գանձեր է պարունակում և մեր հայոց գրականութիւնը մեծ վաստակ կունենար, եթէ զանազանութեան չը տար, ինչպէս արել է մինչև այժմ, այն ազգի գրականութիւնը, թէ բանաստեղծ և թէ գրաւորը, որի հետ հայ ազգը կապված է եղել բազմադարեան պատմական, կրօնական և ընդհանրապէս կանոնավոր: Նի՞ք Տեղապիր, Գեօրգի, Նիլլէր, Հիւզո, Բերանդէ ունեցող ազգերը հետաքրքրվում են պարսկական գրականութեամբ, ուսումնասիրում են պարսկական բանաստեղծին մինչև այն աստիճան, որ նրա անունով յա-

րան, ամենեւին կանգ չէ առնում, այլ յաճախ կերպով առաջ է գնում: Նա տարածվում է Գառնիկայի նահանգի սահմաններից դէպի Թիֆլիսի նահանգը և արդէն երևացել է Գորու գաւառի շատ գիւղերում: Մասնագէտների ժողովը, ընդհանրով այդ գաւառի վարակված տեղերը, անհամարն է համարում նրա դէմ մաքաւել հիւանդութիւնը մի տեղ գաղաթեւում պէտք է երևայ հարեան տեղերում և այդպիսով մաքաւումը պէտք է միայն աւելորդ ծախքեր կլանէ և ոչ մի արդիւնք չառաջացնէ:

Մեր երկրում սակայն դեռ մնում են

տուկ կողմեր են հաստատում, անշուշտ, այդ անոթ հետաքրքրութեան համար չէ. նրանց նպատակն է ճիշտացնել իրանց, առանց այն էս, մայրենի ճիւղ լեզուն, արևելեան մի ամենահին և ամենաբանաստեղծական լեզուի ձևեր, նուրբ և գեղեցիկ ոճերով ու դարձուածներով: Ուրեմն որքան առաւել մեզ, հայերիս, անհամբեր է ուսումնասիրել պարսկական գրականութիւնը, ոչ միայն բանաստեղծականը, մեր աղբատիկ և անմշակ աշխարհաբար լեզուն ճիւղացնելու և մշակելու համար, այլ և պատմականը, որ կարող էր մեծ լոյս արձակել մեր սեփական պատմութեան շատ մութ և անբացայայտ կէտերի վրա, լուսաբանել նոյն իսկ մեր բանաստեղծական արտադրանքի գրականութեան մութ խորշերը, լուծել լեզուագիտական շատ վէճեր:

Բայց ինչ գիտենք մենք պարսից գրականութիւնը:

Բացի Սաադիի, Հաֆիզի մի քանի հատուածներից, այն էս զինքն, սերը և շուայտութիւնը դրուատող հատուածներից, բացի Ֆրեդոսի պօէզիայի մի քանի էջերի անաշուղ թարգմանութիւնից, մենք ուրիշ ոչինչ չը գիտենք: Մենք ամենեւին ծանօթ չենք այնպիսի մտածող, փիլիսոփայ գրողների և պատմագիրների հեղինակութիւնների հետ, ինչպէս Բուրդէ Գի հռչակաւոր բանաստեղծը, Բելամի պատմագիրը, Ֆելադի, Խակաւի, Անվէրի բանաստեղծները, Աթթար բարոյագէտ-բանաստեղծ-սօփի գրողը, Ջալալէդդին Բուսմի, Խոսրով Գասելի բանաստեղծները, Բաշիդ Էդրի, Շէրիֆէդդին, Միրիսօնդ, Խանդամիր և Ջամի պատմագիրներն ու գրողները և, վերջապէս, Օմար Խայեամի պէս հռչակաւոր սօփի բանաստեղծը, որի հեղինակութիւնները, ինչպէս ասացի, մի առանձին ուշադրութիւն են գրաւել Եւրոպայում, մասնաւոր Անգլիայում և որի հետ էս այժմ պէտք է ծանօթացնենք Վշակի ընթերցողներին:

Խայեամ մեր բանաստեղծի մականունն է

մի քանի այգեգործական մեծ շրջաններ, որոնք ազատ են ֆիլօքսերայից և կարող են ազատ մնալ, եթէ մենք ինքներս մեր անհոգութեամբ և սգիտութեամբ չը տարածենք այդ սարսափելի միջատը մեր այգիներում: Այդ շրջաններն են՝ Վախէթը, իր հռչակ ստացած գինեգործութեամբ, Երեւանեան նահանգի Արաքսի աւազանը իր բազմաթիւ և համեղ խաղողով, Գանձակի և Բագուի նահանգները իրանց նշանաւոր այգիներով, որոնք տալիս են Գանձակի խաղողը, Սաղեանի, Մազրուսայի, Գիւրջիվանի յայտնի գինիները: Այդ շրջանները շատ ընդարձակ են և առ այժմ կղզիացած այն տեղերից, ուր բուն է դրել ֆիլօքսերան:

Մասնաւոր կղզիացած և բոլորովին ապահով դիրք է բռնել մեր երկրում Երեւանեան նահանգը, որ բաժանված է միւս նահանգներից բարձրադիր լեռնաշղթաներով: Երեւանեան նահանգի այգիները ոչ մի անմիջական կապ չունեն ուրիշ նահանգների այգիների հետ: Ուստի ֆիլօքսերան ինքնաբերաբար, իր բնական աճումով և առաջնութեամբ, չէ կարող մտնել Երեւանեան նահանգը: Նրան այնտեղ կարող են տանել միայն իրանք մարդիկը, եթէ անհոգաշարք վագեր և ուրիշ առարկաներ բերեն այն տեղերից, ուր հաստատվել է ֆիլօքսերան: Այգեգործներից շատերը, ցանկանալով բարւոյել իրանց այգիների որթերը, կամ ինչպէս գործնականութեամբ մէջ ընդունված է ասել, ազնուացնել իրանց վագերի տեսակը, գնում են խաղողի նշանաւոր և յայտնի տեսակների վագերը և անկում իրանց այգիների մէջ: Հէնց նոյն Երեւանեան նահանգում այժմ յայտնի են այգիներ, որտեղ կան Վախէթի և Եւրօպական խաղողի վագեր, որոնք բերված են ուրիշ տեղերից:

Բոլորովին արդելի վագերի տեղափո-

ւն ոչ իսկական անունը, որ Օմար է: Արեւելքում ընդունված սովորութիւն է, որ ամեն մի բանաստեղծ կամ գրող մի մականուն տալ իրան. Օմարը ընտրեց Խայեամ մականունը, որ նշանակում է վրանագործ, որովհետև իր հայրը արհեստով վրան շինող էր: Այդ առիթով պարսիկները գովում են Օմարի համեստութիւնը, որովհետև մինչև ուրիշ բանաստեղծները և գրողները, ըստ սովորութեան, ընտրում էին իրանց համար չքեղ և փառաւոր մականուններ, ինչպէս Փրօդօվի, որ նշանակում է աղբախալին, երկրային, Սաադի—հրէշտիկ, Անվէր—բուռն, Հաֆիզ—պահապան, Օմարը ընտրեց իր հօր արհեստը բացայայտող մի մականուն:

Խայեամը հրապարակ եկաւ այն ժամանակ, երբ Սելջուկեան հարստութիւնը, կործանելով Ղազնուիդիդների գահը, տիրապետեց Պարսկաստանին հիշելի 429 կամ Փրկչական 1037 թիւին: Նրա կենտրոն սերտ կերպով կապված է երկու անձանց կենտրոն հետ, որոնք նոյնպէս նշանաւոր հանդիսացան ամբողջ արևելքի պատմութեան մէջ. դրանք են՝ Աբդուլ Գասթըմը և Ջամի: Միւս Վրէլը կոչվածը, Արփ-Ասլան թագաւորը մեծ վեղիքը և Հասան Սաբաֆին, հռչակաւոր Հասանեան կամ Փրօդօվիներ և կամ Ասասնեաների ազգականներ իրմերի հիմնադիրը:

Օմար Խայեամը ծնվեց Խորասանում, Նիշապուր քաղաքին մօտ գիւղերից մէկում: Այդ քաղաքը նշանաւոր էր ամբողջ արևելքում իր հռչակաւոր մէկ գրէսէյով կամ համալսարանով, որտեղից դուրս էին գալիս ակաւաւոր պետական անձինք և յայտնի գրողներ: Փրկչական 1042 թիւին Օմարը եկաւ Նիշապուր և մտաւ այդ դպրոցը. չուտով նա բարեկամացաւ երկու դաս ընկերների հետ, դրանք էին՝ Աբդուլ Գասթըմը և Հասան Սաբաֆին: Երեք պատանիները, երազելով իրանց ազգային մասին, երգեցին և դաշն հաստատեցին օգնել միմեանց, եթէ բախ-

լուծը և նոր տեսակների գնելը անկարելի է. Երեւանեան նահանգը, որ ունի ուտելու խաղողի գեղեցիկ և համեղ տեսակներ, աղբատ է գինու խաղողի լաւ տեսակներով և յամենայն գէպս նա պարտաւոր է փորձեր անել զանազան տեսակ վագերի վերաբերութեամբ, որպէս զի գտնվի աւելի ձեռնառու և լաւ տեսակը: Այդ պահանջը տեղի ունի իրականութեան մէջ, ուստի պէտք է հոգալ նրան բաւարարութիւն տալ այնպիսի նպատակաւորաբար ձեռք, որ նոր տեսակի վագերի հետ միասին չը մտնի Արաքսի աւազանը և ֆիլօքսերան: Այդ կարելի է իրագործել կամ վագեր բերելով ֆիլօքսերային կոմիտէի յատուկ ցուցմամբ և նրա ղեկավարութեամբ և կամ յատուկ տեղաբնակում նախօրոք բուսցնելով համապատասխան վագերի զանազան տեսակներ: Ներկայումս Երեւանի մօտ գտնվող Մարգարի այգում բուսցնվում են զանազան տեսակ միգատու ծառեր, թէ փորձեր անելու և թէ ազգաբնակութեան համար օրինակ ծառայելու նպատակով: Այդ այգում կամ մի ուրիշ գաստակերտում կարելի է մեծ դիրքով բուսցնել խաղողի որթի տեսակներ և ունենալ նրանցից մեծ քանակութիւն վաճառելու նահանգի այգեգործներին:

Պետութիւնը, որ այժմ մեծ գումարներ է ծախում ֆիլօքսերայի դէմ մաքաւելու գործի վրա, կարող էր ազատել իրան ապագայ անվերջ ծախսերից, եթէ ի միջի այլոց հիմնէր մի այդպիսի անկարան: Նշանակով թէ ֆիլօքսերային առաջն անվաճ ինչէր, և թէ ստեղծված կը լինէր կատարելագործված մշակութեան մի նոր կենտրոն, որից կօգտվէր շրջակայ ազգաբնակչութիւնը:

Իրանցից մէկին ժողայ և իրանցից մէկը մեծ պաշտօնի կամ հարստութեան հասնի: Երեքն էլ աւարտեցին իրանց ուսումը: Խայեամը, որ ի ընէ հանգաբարաբար և համեստ էր, անձնատուր եղաւ աւելի վերացական գաղափարների ուսումնասիրութեան և մտաւոր, քան աշխարհային կենտրոն, իր այդ բնածին հակումների պատճառով նա դարձաւ մի միտաւոր բանաստեղծ, մի սկէպտիկ ու մի և նոյն ժամանակ ֆատայիստ բանաստեղծ, մի խօսքով նա դարձաւ սօփի կամ սուֆի, այսինքն հետեւող մի աղանդի, որ այդ ժամանակ ամենատարածված էր արևելքում, իսկ մականուն Խայեամի մէջ: Այդ աղանդը վարդապետում էր, թէ կարելի է հասնել կատարելաւ երջանկութեան և երանելի կեանքի, այն է կարելի է հաղորդակցութիւն հաստատել ուղղակի Աստուծու հետ, արհամարհելով ամեն ինչ, որ երկրային է, հրաժարվելով աշխարհային ամեն մի գոյաբնութիւնից, վագերով կատարելաւ սոփիական կեանք. նա ոչ մի նշանակութիւն չէ տալիս կրօնի արտաքին ձևերին, արտաշայտութիւններին. նա թէն չէ մերժում զուրանը, բայց ասում է, թէ չը պէտք է հետեւել նրա գրին, այլ ողունս Կատարելաւ սուֆի դառնալու համար, պէտք է անցնել յաջորդաբար չորս աստիճանից:

Երկրասարք Խայեամը դարձաւ սուֆի-բանաստեղծ, բայց նա աղբատ էր, նախ, որովհետև իրեր սուֆի, արհամարհում էր աշխարհային իրերը, երկրորդ՝ որովհետև հօրից ոչինչ չը ժառանգեց: Ընդհակառակն, նրա երկու ընկերները—Աբդուլ-Գասթըմը և Հասանը—մեծ աշխուրթիւն ունեցան. առաջինը, որ փառասէր էր և դրական միտք ունէր, ուսումնասիրեց իր երկրի պատմութիւնը և մանաւոր պետական ծառայութեան մէջ, չուտով գրաւեց Արփ-Ասլան թագաւորի ուշադրութիւնը և դարձաւ նշանաւոր պետական գործիչ. նա եղաւ այդ թագաւորի սագրազմը և ստացաւ նըզամ-ու-լ-լը (պետութեան ղեկավարողը) տիտղոսը, որովհետև

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Գեո. հին առակագրիներն են նկատել, որ գաղութ շատ անգամ դալի առաջ մեղադրել է լինում և այն դեպքում, երբ նրան ոչինչ, բոլորովին ոչինչ միայն չէ լինում պատճառած: Իմաստուն առակը շատ անգամ է մարդկային բարոյականության պատկերը ցուցնում իր մէջ: Այսպէս, Գերմանիան ուղում է կանել Քիւրբայի այն համեմատաբար, որ յայտնի է Փոքր-Ասիա անունով. ծրագրիներն մի ահադին կոյտ կայ, թերեւս մարդիկ դատում և վրձնում են, թէ ինչպէս պիտի իրագործվի այդ բանը: Գերմանական արտոնական այնքան զբոսաշրջական է, որ շատ հրապարակախօսներ նոյն իսկ մոռանում են, որ Գերմանիայի վեհապետը Սուլթան Սալահադինի գերեզմանի մօտ հանդիսաւոր կերպով յայտարարել է, թէ ինքը 300 միլիոն մուսուլմանների բարեկամն է. մոռանում են այդ, և հրապարակով դատում են, թէ ինչպէս պիտի բաժանվի Քիւրբային, համոզված լինելով, որ այդ բաժանումը անխուսափելի է, որ Օսմանի թիւակները դադար վաղ թէ ուշ պիտի փլուկ: Ինչպէս պիտի նայէ այդ դատողութիւններին Ներքիի կարծիքը մարդը, որ բարեկամաբար սեղմել էր Գերմանիայի հրամանատարի ձեռքը և նրան իր հովանաւորն ու աշակիցն էր համարում: Ինչպէս պիտի նայէ թիւրք պատուական, ազնիւ ցեղը, Արեւելի այդ գերմանացիին, իր բարեկամ ազգին, Արեւմտեքի գերմանացիներին այդ չարագործակ մարդարեւութիւնների վրա... Թողնեք այդ. ուստի առաջնորդ ասում է. СВОИ МЯДИ—СОУТЕМСЯ! Կայ այստեղ մի աւելի դարձանայի հանգամանք: Տասն տարեկան երեխան է դուք, որ եթէ Գերմանիան կամենում է կոչ տալ Փոքր-Ասիան, այդ բանին երբեք հակառակվել կամ դիմադրել չէ կարող այդ թշուառ երկրում ապրող մի բուն խեղճ մուսուլման հայ ժողովուրդը, որովհետեւ ինչ է նա Գերմանիայի դրահապատ բռնակցի դիմաց, մանաւանդ երբ վերջինս հետ է այն նոր աւետարանը, որ երկու տարի առաջ ուղարկվեց Ձինաստան: Եւ սակայն բանից դուրս է դալիս, որ հայ ժողովուրդը կտրել է Փոքր-Ասիայի վրա աչք տնկած գերմանացիների բռնար, հանգստութիւն չէ տալիս նրանց: Փոքր-Ասիայի դատարար վաղուց արդէն ծծել, այնպէս տաքրել են իրանց վրա թափված արիւնը. վաղուց Օրմանեան պատրիարքը պաշտօնական հաշիւ է վայելում Ներքու, բայց գերմանական մամուլը դեռ հիմա էլ շարունակում է հալածել

հիւնայի կարգ ու կանոն մտցրեց ընդարձակ կայսրութեան բոլոր ճիւղերի մէջ: Բոլոր պատմաբանները մեծ գովասանքով են խօսում ներդրում-միջոցի մասին. նրա հաշիւը տարածվեց մանաւանդ Ալի-Ալայի որդու, Մէլի-Շահի ժամանակ: Ինչպէս յայտնի է, այդ արդար և իմաստուն սելջուկ թագաւորի օրով, այն ժամանակ, երբ Ներսիս ընկղմված էր բարբարոսութեան և խորին տգիտութեան մէջ, գիտութիւնները և գրականութիւնը սկսեցին ծաղկել. աստղագիտութիւնը, մանաւանդ, մեծ առաջընթացութիւն գործեց և հնարվեց Ջալալեան տոմարը, որ շատ մօտ է Գրիգորեան տօմարին: Այդ թագաւորութեան փայլի և շքեղութեան պատճառը Ներքում-միջոցն էր:

Սրբորդ ընկերը, Հասան-Սաբահին, որ նոյնպէս փառասեր էր, բայց խորամանկ և նախաձեռն, ուսումնասիրել էր մաթեմատիկական գիտութիւնները և մոգութիւնը (magie) և առիթ էր որոնում իրագործելու իր փառասիրական ձգտումները, բայց դեռ չէր աջողվում:

Իմանալով Աբդուլ-Փասալի աջողութիւնը, երկու ընկերները դնային նրա մօտ և յիշեցրին նրան իրանց աշակերտական ուխտը: Շատ լաւ—արտասանեց Ներքում-միջոցը—պատրաստ եմ ուխտս կատարելու. առանցք տեսնեմ, ինչ էր կամենում: Եւ ոչինչ չեմ կամենում, ասաց գիւղի եկամուտը: Եւ մի գէրվիչ մարդ եմ և փառասիրութիւն չունեմ. եթէ խղիւղքս կատարես, ես կարող եմ իմ հայրենի կոտորի տակ, հեռու աշխարհից, առանձնութեան մէջ, մշակել խաղաղութեան բանաստեղծութիւնը, որ հմայել է հոգիս և անձնատուր լինել մտածողութեան: Իսկ ես, ասաց Հասան Սաբահին, խնդրում եմ մի պալատական պաշտօն տաս ինձ:

Սաղապամբ կատարեց իր ընկերների խնդրերը. երկուստարդ բանաստեղծը վերադարձաւ իր հայրենի գիւղը և շուտով դարձաւ նշանաւոր բանաստեղծ, իսկ Հասան Սաբահին, դաւաճանելով իր բարբարոսին, սպանելով նրան, վերջ

հայերին: Ինչպէս գիտեք, բանը այն տեղին հասաւ, որ նոյն իսկ թիւրք մամուլը սկսեց պաշտպանել հայերին գերմանական արշաւանքի դէմ. բայց բանից երևում է, որ մինչև անգամ այս դարձանայի փաստը էլ իրատեղ Պէօթի հայրենակիցներին: «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագրի թիւակիցը մանրամասն նկարագրում է թէ Գերմանիան ինչ հեռաւոր նկատումներ ունի Քիւրբայի վերաբերմամբ և ինչպէս է պատրաստվում իր ծանր թախիճ դնելու նրա չաղ պատանդների վրա: Յիշում ենք, եթե անհանգիստ թախիճներն Ա. Պօլի հայ երեսփոխաններին մէկը բարեկիցաւակ ազգային ժողովում ասած իր մի ծառի մէջ ընդառնականութիւնը նմանեցրեց հաւի, որ հաւակիթներ կը գործէ, բայց յայտնի չէ թէ ինչ դուրս կը գայ այդ հաւակիթներից: Գերմանիան այժմ հաւակիթներ է դնում Քիւրբայի գանազան կողմերում. ինչքան դուրս կը գան դրանցից, ոչ ոք չէ կարող իմանալ, նոյն իսկ հաւակիթներ դնողը, բանի որ նոյն իսկ Նապօլեօն մեծերի համար ապագան, մինչև անգամ ամենամօտիկ ապագան ծածկված է եղել մութի մէջ: Բայց գերմանական հաւակիթները այժմ դնում են Քիւրբային պաշտպանելու, ուժեղացնելու նպատակով, գոնէ այդպէս են հաւատացնում հաւակիթ դնողները: Շատերն են այդպիսի սիրուն երգերով օրօրել Ներքի մարդուն՝ նրան աւելի լաւ ծծելու համար, և ոչ ոք դեմ չէ, որ այդ արհեստի մէջ Բիլհոնֆիլդի դափնիները այժմ վայել գերմանացի Միլիթը: Հարցը նրա մէջ է, թէ Միլիթը ինչպէս պիտի արտայայտէ իր այդքան ընդունակ զգացմունքները դէպի թիւրքական լազնիւ ցեղը» և նրա հրամանատարը: Չէ որ Քիւրբայում կան և ջրիտուններն, չէ որ այդ ջրիտուններն և թիւրք կառավարութեան մէջ գոյութիւն ունի մի մըշտական հակառակութիւն: Այդ հարցի առաջ գերմանական գործիչները այսպիսի վերք են բռնում:

Ներկուսից մէկը. կամ բարեկամութիւն սուրբ թանի հետ, կամ թէ համակրանք և պաշտպանութիւն նրա հպատակ ջրիտուններին կողմից: Միամտամանակ թէ մէկը և թէ միւսը անել անկարելի է, որովհետեւ Քիւրբայի կառավարութիւնը և նրա ջրիտունները հպատակները մշտական հակառակութեան մէջ են գտնվում: Եթէ գերմանացիների համար աւելի թանկագին են, քան թիւրքաց ջրիտուններն, որ համակրանքները, ուրեմն գերմանացիներն էլ պիտի հետեւն այն քաղաքականութեան, որ ունի սուլթանը ջրիտուններին վերաբերմամբ, որքան էլ դա սարսափելի և հակա-մարդկային քաղաքականութիւն լինի:

Վերջով դարձաւ հիմնադիր մի ահեղի աղանդի, որ յայտնի է համաշխարհային պատմութեան մէջ բաթիշի, հաշիշեան կամ մարդասպաններ (ասասէն) անունով:

Արտաքսովելով թագաւորի պալատից, Հասան Սաբահին գնաց Սիւրիա և Լիբանան, ուր ուսումնասիրելով բոլոր կրօնները, կազմեց մի նոր աղանդ, որի սկզբունքները շատ հեռու են ոչ միայն ջրիտուններից, այլ և մահապաշտականութիւնից: Նա, աւելի ճիշդն ասած, կազմեց մի յեղափոխական ընկերութիւն, որի անդամները, արձակվելով բարոյականութեան բոլոր պարտաւորութիւններից, ենթարկվում էին միայն մի օրէնքի և պարտաւոր էին ամենախիստ կերպով պահպանել այդ օրէնքը, այն է՝ կուրօքնի հանգանդվել իրանց գլխաւորներին—Հասան Սաբահին և նրա պաշտօնականներին: Ով որ կամենում էր ընկերութեան անդամ դառնալ, առաջ նրան խնայում էին մի ըմպելիք, ոչ պարտաւորվում էր կանեփ ըստից և ափիօնի կամ հաշիշի ներգործութիւնը էր. խըմողը ընկնում էր քնի մէջ և երազում վայելում էր ամենահրաշալի, բերկրալի տեսարաններ, զգայական զուարճութիւններ: Նրբաբարձրում էին, գլխաւորը խոստանում էր ներբանց, թէ նայելիս բերկրութիւններ պէտք է վայելեն և մահից յետոյ և այդ երանաւոր կեանքին շուտ հանելու համար, պէտք է արհամարհել երկրային կեանքը: Այդպիսով կազմվեց կոյր Փանաթիկներ մի ընկերութիւն, որի ամեն մի անդամը, առանց մի քանի վարանելու, իր գլխաւորի հրամանով, դաշտին հարուստներով սպանում էր, ում վրա որ մատուցուց էր լինում գլխաւորը: Ընկերութեան հետեւողների թիւը հասնում էր 70,000-ի և նրա զինուորի բնակավայրը Բուրբար ամրոցն էր Պարսկաստանում, իսկ լեռոյ Ալամութ բերքը: Մէլի-Շահ թագաւորը տեսնելով, որ հայիչեանները լայն ծաւալ են ստանում և վտանգ սպառնում էր իր իշխանութեան, հրաման ուղարկեց Ներքում Միլիթի միջոցով Հասան Սաբահին հնա-

Եւ որովհետեւ սուլթան Համիդի համակրանքները աւելի իրական, չօշափելի օգուտներ կարող են տալ, բանի որ ոչ մի բրիտանացի ազգ չէ կարող երկաթուղիների մեծամասնութիւնը շահերի համար ծանուցարն և շուկայ բաց անել Քիւրբայում, ուստի Միլիթի հայրենակիցների ահադին մեծամասնութիւնը համոզված է, որ սուլթանական համակրանքները դադարաւոր և մարդկայնութիւն անուանված անհիւսիս բանից շատ և շատ բարձր են: Ի հարկէ, Գերմանիայում էլ կան մարդիկ, որոնք ուրիշ դաւանութիւն ունեն, որոնք հաւատում են թէ հարուստ և բարեկեցիկ լինելու համար անպատճառ հարկաւոր չէ անբարոյական, տմարդի լինել, բայց, ինչպէս յայտնի է, այդ տեսակ մարդկանց կոկորդ երկաթ է խցկված դեռ այն ժամանակից, երբ Քիւրբային էր թագաւորում: Այդ իսկ պատճառով հակառակ կարծիքները խլանում են ընդհանուր տրամադրութեան մէջ, իսկ ընդհանուր տրամադրութիւնը սաստիկ հայտնացութիւնն է, մի զգացմունք, որ չէ կարող զրկւած լինել հայերի և գերմանացիների մօտիկ յարաբերութիւնից—այսպիսի յարաբերութիւն չէ էլ եղել—այդ բարեկամին օգնելու և նրանից առևտրական արտօնութիւններ ստանալու ակնկալութիւնից:

Հարկաւոր եղաւ մի կերպ խլացնել «հայական հարցը» բարոյական մտքով, որպէս զի Միլիթը չը դժուարացնէր կառավարութեան ծրագրիները իրականացումը: Կրօնապաշտօնական մամուլը սկսեց այդ բանը, մնացած մամուլը հետեց նրան և ասա՛ մի քանիները դիմաւոր, մի քանիները նմանփելով և գործի մասին հակադրութիւն չունենալով, սկըսեցին ոչ միայն արդարացիներ գերմանացիներին անտարբերութիւնը դէպի թիւրքացները, այլ և հասան այն աստիճանին, որ նրանց կոտորել անուղեկ լաւ և արդար գործ:

Ինչպէս յայտնի է ՎՄակիթի թիւակցութիւններից, գերմանական մամուլը անցեալ տարվանից մի ամբողջ արշաւանք սկսեց այն մի բուն գերմանացի մարդասէրների դէմ, որոնք Քիւրբայում որբանոցներ են պահում: Արշաւանքը հիմնված էր այն անուանող դանդաղի վրա, որ ներկայացրել էր Օրմանեան պատրիարքը թիւրք կառավարութեան և որի մէջ ապավ էր, թէ բողոքականները որբանոցների միջոցով կրօնափոխութիւն են տարածում: Գերմանացի հայատեսները թմրակ դարեկցին, աղաղակ բարձրացրին, թէ չը պէտք է օգնել հայ որբերին, որովհետեւ դա ցանկալի չէ բարեկամ սուլթանին և կարող է մնանել գերմանական շահերին. և այդ բարոյութիւնը համակրանք գտաւ գերման հասարակութեան մէջ, որ, ինչպէս հաւատաց-

դանովել իրան: Հասանը իսկոյն կանչեց իր զինւորներից մէկին և հրամայեց նրան, դեսպանի առաջ, սպանել ինքն իրան. զինուորը անմիջապէս կատարեց հրամանը. ապա կանչեց մի ուրիշ հաշիշականի և հրամայեց նրան վայր գցել իրան աշտարակի զինից, այդ հրամանակ անհնար ինչպէս կատարվեց: Այն ժամանակ Սաբահին ասաց Մէլի-Շահի դեսպանին. «Գնա և պատմիր տիրոջը, որ այսպիսի 70,000 կոյր հետեւողներ ունեմ»:

Միայն 1255 թիւին, այսինքն մօտ 150 տարի գոյութիւն ունենալուց յետոյ, հաշիշականների սարսափելի աղանդը ջնջվեց Հուշաբու խանի ձեռքով:

Վերադառնալով Խայեամին, Բանաստեղծը, թողնելով հեռու մնալով իր ժամանակի խոտիւթիւններից, յեղափոխութիւններից, խաղաղ ապրում էր իր գիւղում, և ջերմ կերպով անձնատուր էր եղել սուֆիների փիլիսոփայութեան ուսումնասիրութեան: Շրջապատված մի քանի բարեկամներով, նա գիտու և բանաստեղծութեան մէջ որոնում էր իր հանգստութիւնը: Պարսիկ պատմաբանները բանաստեղծի կեանքից հետեւալ բնորոշ դէպքերն են նկարագրում: Մի երեկոյ, երբ լուսնեակ զիշերով, Խայեամը նստած էր իր տան կոտորի վրա, մի քանի բարեկամների և երաժիշտների հետ և գինի էր խմում, յանկարծ մի ըմբի բարձրանալով, հանգրեց ճրագը և տապալեց գինու սափորը, որ դրած էր կոտորի եզրին. սափորը, ընկնելով, կոտորվեց և գինին թափվեց: Բանաստեղծը, զայրացած, խլով մի չորեքտողեան բանաստեղծութիւն ստեղծեց, մի ոտանաւոր, որի պատճառով Խայեամը ոչ միայն մահանդակներին, այլ և սուֆիների կողմից հաշիշակից իր և անաստեղծ: «Բու խորակեցիր գինու սափորս, ով Աստուած. դու դրանով փակեցիր իմ առաջ ուրախութեան դուռը, ով Աստուած. խմողն ես եմ, բայց դու ես գործում հարձակ անկարգութիւնը: Ըն (թող բերանս լցվի հոգով), միթէ Աստուած, դու ևս հարձակ ես: Հազիւ բանաստեղծն ար-

նում է թղթակիցը, իր ամենամեծ մատով առում է հայերին: Մարդասէրները, ի հարկէ, իրանց գործն են շարունակում. բայց թողնեք նրանց, կանգ առնենք այն հանգամանքի առաջ, որ Գերմանիան մեծ մասամբ հայատես է: Ինչպէս է այդպէս: Ինչ են արել հայերը գերմանացիներին և ինչ կարող են անել ապագայում, եթէ մինչև իսկ իրականաւոր Միլիթի երազած դրախտը, երբ նա կատարեալ տէր կը լինի Փոքր Ասիայի դաշտերում: Ծիծաղելի են թուում այս տեսակ հարցերը, չէ: Հայը եթէ կամենայ էլ, ոչ մի հնարաւորութիւն չունի արգելելու գերմանական ճոխ սեղանից, իսկ դա մրցութիւն չէ, ոչ մի վտանգ չէ ներկայացնում գերմանական ամեն շահերի տեսակէտից: Ել ինչու այդ դժբաղդ, հարստահարված մարդը այսօրվայ քաղաքակրթ, բրիտանացի գերմանացու աչքի փոխն է դարձել: Պատճառը, միակ պատճառը այն է, որ այդ լինումութիւնը, այդ առեւտրութիւնը կարելի է և պէտք է շահագործել սուլթան Համիդի և նրա ուղղահասաւ հպատակների համակրանքները ձեռք բերելու համար, համակրանքներ, որոնցից պիտի օգտվի գերմանական առևտուրը: Ահա թէ հարկական ինչ ստոր սա-կարկութեան վրա է մի ամբողջ առաջադէմ, քաղաքակրթված ազգ, մի ազգ, որ իր պատմութեան մէջ ունի Սեղաններ, բայց այժմ մի բուն թշուառ ժողովուրդի հալածանքի գնով ուղում է վատասկել մահամեծ Քիւրբայի բարի տրամադրութիւնը... Եւ եթէ կամենաւ, մեր լուսաւորված դարում դեռ խօսք կայ բարոյականութեան մասին: Յիշեցեք այս օրպէս Պարիզի Շաբրոլ փողոցը, ուր իր համարցի մէջ փակված է Գէրշու: Ինչ է այդ մարդը: Նա ասում է, թէ աշխարհը պէտք է աղաւթել Բոտիլլի և նրա ցեղակիցների գերութիւնից, որովհետեւ այդ ցեղը առևտրական հանճար ունի և աջողութեան համար գործադրում է ամեն տեսակ ստոր միջոցներ: Գէրշուի արհեստակիցներից շատ կան և Գերմանիայում: Ինչ կը պատասխանեն նրանք, եթէ մի հեղինակաւոր ձայն, մի մարդուց կանչէ. «Պարիսիցիներ, ձեր գործարարած միջոցները շատ են սուրբ: Եւ այդ հարցը զննելով, ցոյց տար այն երկիրը, որ իր ազգաբնակչութեան, իր կառավարութեան, իր պատմութեան հետ մի ամենատարբեր սակարկութիւն է վարում դահիճների հետ, փառասիրելով նրանց սոսկալի գործերը, կատարել կերպով հալածելով նրանց զոհերին: Ինչ պատասխան կը տալին...

տասնեակ այս ոտանաւորը—ասում են մահապաշտական պատմաբանները,—և ասա՛ նայելով մի հայրու մէջ, տեսաւ, որ իր կերպարանը սևացել է անուրի նման. երկինքը պատմել էր նրան Սյն ժամանակ նա, աւելի յանդուգն և ամբարիշտ քան առաջ, արտասանեց տեղի ու տեղը հետեւեալ բառերով, որ ցոյց է տալիս, թէ որքան ընչ հաւատ է ընծայում բանաստեղծը Ղուրանի մէջ նկարագրած հանդերձեալ աշխարհի պատմութեան:

«Ասա, ով Աստուած, ով է այն մահապաշտացուն, որ մեղք չէ գործել այս աշխարհում. ով մեղք չը գործել, ինչպէս կարող է ապրել այս երկրում, ասա տեսնեմ: Որովհետեւ ես չարութիւն գործեցի, դու ևս ինձ պատժում ես չարով. ուրեմն, ասա, թոյն է իմ և քո մէջ եղած տարբերութիւնը:

Խայեամի, իբրև բանաստեղծի անունը հոշա-կող ոտանաւորները, որոնք կրում են «Բուբա-յեաթ Խայեամ» անունը, թուով 464 տուն են. ամեն մի տունը բաղկացած 4 տողից: Թէև այդ ոտանաւորները համեմված են գինու գովասանութեամբ, բայց նրանք պարունակում են իրանց մէջ կծու, դառն հեղուկութիւններ, էպիգրամներ Ղուրանի և իսլամ կրօնի շատ վարդապետութիւնների, յետադէմ և անմարդասէր հայեացքների դէմ. այդ պատճառով, Խայեամը, մանաւանդ, որ կրում է Օմար անունը, սաստիկ հալածված է չիաներից և մոլայնաբեր անքնուն նրան. այնու ամենայնիւ նա պարտից արքունիքի ամենասիրելի բանաստեղծն է եղել միշտ և է այժմ ևս: Բոլոր խնձողների ժամանակ երաժիշտները նուագում և երգեցողները երգում են Խայեամի ոտանաւորները:

Ինչեք կայ կարծեալ, որ Խայեամ մեռաւ ձե-

րութեան հասակում, թէ և յայտնի չէ երբ: Բացի բանաստեղծութիւններից նա թողել է նաև ատղապիական և աղբերայական նշանաւոր հեղինակութիւններ, որոնք ձեռագրից թարգմանված և հրատարակված են Պարիզում 1851 թիւին:

Հ. Առաքելեան

ՆԱՄԱԿ ՂԱԶԱՍԻ ԳԱՒԱՌԻՑ

Բարանա գիւղ, օգոստոսի 20-ին
Փառք Ստուծու, այս տարի աւագակութիւնը Ղազարեան վերջացած է, բայց աւագակութեան մի այլ տեսակը՝ գողութիւնը իր ամենաժայռայեղ յանդիմանութեանն է հասած: Նրկրի անտառային ու լեռնային դրութիւնը և հայերի խառն լինելը թուրք գիւղացիներին հետ թէ ստրուժ և թէ դաշտում, տարաբարձրաբար, նպաստել են Ղազարեան գողերի և աւագակների անպակաս լինելուն:

Մերերը և պառաւները պատմում են, որ ուսանելի կովկասի տրեւոց առաջ, ով որ լաւ ձի կամ այլ կենդանի ունէր, իրանը չէր համարում, իսկ փող և գեղեցիկ կին ունենալը մի կատարեալ պատուհաս էր: Պառաւների պատմածից երևում է, որ տան գողը (ամառ ժամանակ սարերում) գիշերները թողնում կամ այլ գետնափոր փոսերում էին պահում, իսկ գեղեցիկ ու մատաղահաս հարսները ու աղջիկները երեկոները հագնում էին պատառոտաշորեր և հին ցնցոտիներով գլուխներն փաթաթում և այնպէս նստում վառած օջախի առաջ, որպէս զի հետագայ հայրենի գեղեցիկ չէր եմ:

Ուստաց տիրապետութեանց յետոյ (կովկասին) հայ գիւղացիները այսպիսի ընկճված և ստրկական դրութիւնը վերջանում է, բայց Ղազարեան աւագակութեանը և գողութեանը վերջ չէ լինում: Ով չէ յիշում յայտնի աւագակներ՝ Իրազային, Մուրադուրուն, Քեռու-Իսմայիլին, Փարաւին, Չոփուրի տղերանցը, Աբաղ օղուն և վերջերս անվան Սեյդին: Սրանցից ամեն մէկը ունեցել է իր խուճը և մի քանի տարիներ շարունակելով աւագակային արշաւանքները, ահագին վնաս է հասցրել տեղացիներին և իրոք ծախելով տակ է գցել կառավարութեանը: Գեռ չենք յիշում այն պատահական մանր խմբերը, որոնք մի երկու «թաղանից» յետոյ կամ բռնվել, կամ սպանվել և կամ թողել են աւագակութիւնը ու հեռացել:

Այս բոլորի ժամանակ ով է եղել տուժողը՝ դարձեալ հայ գիւղացին: Նա, մանգաղի չաբաշ ընկերը, ենթարկված իր դառն ճակատագրին, իր ողորմելի դրութիւնը պահպանելու և իր դասակների պարէնը հայթայթելու համար, ամառային արեգակի կիզող ճառագայթների տակ կուսուց յետոյ, գիշերն էլ հանգիստ չէ ունեցել, որպէս զի իր յոգնած և ջարդված մարմնին մի փոքր հանգստութիւն տալ, այլ բաց աչքով լուսացրել է իր ձին կամ այլ կենդանին պահելու համար, երբեմն էլ մի ժանգոտած հրացան ձեռքին հերթով պահել է ճանապարհը ըստ ուղղման գիւղական տանուտիրոջ: Ահա այսպիսի առ ուղղով է անցկացրել հայ գիւղացին իր օրերը Ղազարեանում:

Ինչպէս վերը յիշեցինք, այս տարի աւագակութիւնը չէր կայ, բայց օր չէ պատահում, որ գողութեան 1—5 դէպք չը պատահի. և սա ոչ թէ գողութիւն կամ «թաղանի» լինել է, այլ «աշխարհայթիւն»: Օրինակ, գողանում են մէկ թի գոմէշը, կաշին և մսի մի մասը տանում, մնացածը թողնում: Մէկի էլ կթի գոմէշն են գողանում, հրաւիրում են տիրոջը, թէ այսքան թուրքի բեր, արի գոմէշը տաւ: Գողանում են մէկ կովը, և երբ տէրը գնում գողերից պահանջում է իր կովը, նրանք յանդգնաբար աւտում են, «ճնշարիտ» է, մենք այս գիշեր մի կով ենք մորթել, բայց ըսել չէ, այլ այս ինչ մարդուներ:

Սա այս բոլորի անողը ովքեր են.—այսրում կոչված թուրքերը, որոնք ինչպէս պարագիտ ապրում են չըջակալ գիւղացիների արեւը ծըծելով:

Հրաւիրում ենք կառավարութեան ուշադրութիւնը: Ա. Տէր-Խաչատրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մեզ ուղարկել է Րօստով քաղաքից Հին-Նախիջևանի գաւառի Մամալախու գիւղացի Ստեփան Մկրտչեան Առաջնաց հարկեր թուրքի իր հանգուցեալ կնոջ՝ Արիսայի Պետրոսեան Աւագեանցի յիշատակին, որպէս զի մենք այդ փողը գործադրենք բարեգործական նպատակով ըստ մեր հայեցողութեան:

Մեզ հաղորդում են, որ Սոնախի գաւառի տափարակում, մի հին քաղաքի թէ գիւղի աւերակների տեղը փորելու գտել են մի դոհարան և մի կուր: Գիտադարձաբար կուրը կտրուվում է և նրա զուրկը միայն աղջկուկ է հանել: Այդ զուրկը բերված է Քիֆլիսի Յայտնի չէ քաղաքի հին անունը. ենթադրում են, որ այդ տեղերում պէտք է եղած լինի Խօրնաբուրջի քաղաքը:

Օղեսոսայի թերթերը հաղորդում են, որ վերջին ժամանակները Քիւրքեան մեծ քանակութեամբ գնում է ձիեր Ռուսաստանից: Յատուկ դործակալութիւններ հաւաքում են Հարաւային Ռուսաստանում ձիեր, ժողովում նրանց Օղեսոսայում և այնտեղից ուղարկում Կ. Պոլիս: Ռուսաց ձիերը Կ. Պոլիսում արժեն 150—175 ռուբլի:

Մենք հաղորդել էինք, որ Բօրչալուի գաւառի Բայդար կոչված կայաւածում սկսել են ներկայ գաւառից բաժնակի մշակութեան փորձեր անել: Բաժնակը բուսել է շատ աջող և արդէն մօտ է հասնելուն. ցանված է մինչև 30 դեռեալներ: Այդոչ է գնում և հողային ընկալի կամ, ինչպէս վաճառատնոցում անուանում են, «չինական ընկալի» մշակութիւնը:

Քիֆլիսի բուսաբանական այգին պատրաստվում է բոլոր իր տնկարանները և ժողովածուները ներկայացնելու երկրագործութեան միջնատր Նրժդովին և ցոյց տալու այն առաջադիմութիւնը, որ նա արել է վերջին տարիներում թէ նոր բոյսեր մշակելու և թէ եղած կուրտուրաները ընդարձակելու գործում:

Առաջիկայ սեպտեմբեր ամսի 25-ին Պետերբուրգում կը բացվի համառուսական այգեգործական ցուցահանդէս: Ցանկալի է, որ մեր երկրի այգեգործները ժամանակէին այդ ցուցահանդէսին և մայրաքաղաքի ազգաբնակչութեանը ծանօթացնեն մեր երկրի արդիւնների հետ: Այժմ, երբ երկաթուղու գիծը պէտք է կապի մեր երկրի եւրոպական Ռուսաստանի հետ, դժուար չէ լինի մերքե ուղարկել կարճ միջոցում դէպի Ռուսաստանի ներքին վաճառանոցները: Ցուցահանդէսին պէտք է ի ցոյց դրված լինեն թաղի և չորացրած մրդեր, մըրգատու ծառեր, մրգերի և բանջարների սերմեր, այգեգործութեան մէջ գործադրվող դանազան գործիքներ և գիտնական հետազոտութիւններ: Ցուցահանդէսը պէտք է շարունակվի մինչև հոկտեմբերի 5-ը:

ԼՈՒՐԻՐՈՒՑ մեզ գրում են. «Ներկայ օգոստոսի 12-ին ամուսիններ պ. Անդրանիկ և տիկին Աննա խաղացին թուրքերէն լեզուով «Կիլիսի Բալասի» թուրք սիրողների հետ. իսկ ամսի 19-ին, Արեւակեանդարովի ցիրկում, հայերի լեզուով «Մեծապատիւ Մուրացիկաներ» Պարոնեան և Պառուր հանաք է անուամբ փողովել: Հասարակութիւնը այս անգամ սակաւ էր, իսկ խաղը աջող անցաւ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, օգոստոսի 10-ին

Երբէք Սալմաստը չէ եղել այնպիսի ցաւալի դրութեան մէջ, ինչպէս օր է այժմ: Գաւառիկներով բոլորովին իր հայ ազգաբնակչութիւնից, կոբրգիւղերը, ժամերով ման էք գալիս իւրաքանչիւր գիւղում, ձեզ հազիւ է հանդիպում 20 հաստ աղաւթաղ, որոնց մեծ մասը անպէտքացած ձեռնիկներ են: Միայն իւրաքանչիւր փողոցում դուր էր տեսնել կանանց խմբեր, որոնք մի օր և է անկիւնում նստած՝ ակոս վախ են քաշում իրանց երկար ժամանակով պանդխտողների համար, կամ ժապաւնիկներ են անում գնալ Ռուսաստան իրանց ամուսիններին մօտ:

Պանդխտութեան առաջին քայլն անողը սալմաստեցին է եղել, իսկ այժմ այդ անողը այն աստիճանին է հասել, որ մարդ չէ կարող չը ստիկալ: Այս վերջին մի քանի տարվայ ընթացքում կանանց պանդխտութիւնը գնալը այնքան սովորական բան է դարձել, որ ոչ ոք չէ դարձանում, երբ տեսնում է մի քանի, իսկ երբեմն մի քանի ասանակ կանանց իրանց դրացի կամ բարեկամ տղամարդկանց առաջնորդութեամբ դէպի Ռուսաստան գնալիս:

Պանդխտութիւնը մի ազգի համար ցաւալի բան է, բայց աւելի ցաւալին և արտասովին այն ժամանակն է, երբ կինն էլ է պանդխտում իր տղամարդի հետ միասին: Ամեն ոք գիտէ, որ կինն է տան և ընտանիքի հիմքը. երբ կինը թողնում է իր օջախը և հեռանում, նշանակում է տունը չիմի ի վեր կործանվել: Վերջին 5—6 տարվայ ընթացքում Սալմաստից մօտ 300 կանայք են անցել և ցրվել Ռուսաստանի գանազան քաղաքները, դեռ չը հաշուած իրանց երեխաներին, որ ամենաբնիկ կրկնապատիկ թիւ կը կազմեն: Իսկ այդ մարդկանց թիւը 1500-ից անց է: Մի գաւառի համար, որ ունի 1200—1300 տուն հայեր, 2400—2500 պանդխտներ ունենալը իրստ ցաւալի է. պանդխտները

համարեա ազգաբնակչութեան 2/5-ը մասն են կազմում, եթէ վիճակագրական հաշուով իւրաքանչիւր տունը 5/1, հոգի հաշինքը: Պանդխտութեան այսպիսի լայն ծաւալ տանալը իր բազմակողմանի վնասներով հանդերձ ունի մի ուրիշ աւելի զգալի վնաս, այն է՝ ժողովրդի տնտեսական դրութեան անկումը. հողը որ դիւրական մարդու ապրուստի զլխաւոր աղբիւրն է, մնում է անմշակ, առանց արդիւնքի, իսկ եղածն էլ այնքան աննշան է, որ բոլորովին դոհանցուցիչ չէ, հետևապէս տան մէջ ապրողների միակ յոյսը մնում է պանդխտների վրա, իսկ պանդխտները ինչ չափով կարող են օգնել նրանց, այդ կերակայ հետեւեալ տողերից:

Տաւը տարի առաջ, երբ դեռ սալմաստեցին ընտանիքով թափառելու անտը չունէր, պանդխտները աւելի լաւ վիճակ ունէին, քան այժմ: Այն ժամանակներում, պէտք է ասած, առաջանում, հարստանում էլ էին, որովհետև քիչ ծախսելով, սկ կամ սպիտակ օր անցկացնելով կարողանում էին մի քանի թուրքի աւելացնել, տուն ուղարկել կամ վերադառնալիս հետները տանել: Իսկ այժմ մի կողմից օտարութեան մէջ ընտանիք պահելու դժուարութիւնը, միւս կողմից նախկին աշխատանքների չը գոյութիւնը, այնպիսի դրութեան մէջ են դրել նրան, որ շատ ընթերին է աջողվում փող ուղարկել տուն, իսկ մեծամասնութիւնը, մանաւանդ ընտանիքի տէրերը, հազիւ հազ են կարողանում մի կերպ թաշ տալ իրանց խղճալի գոյութիւնը: Մարդ այս բոլորը իմանալուց յետոյ չուարած ինքն իրան հարց է տալիս. մի՞թէ սալմաստեցին չէ կարող իր ընկի երկրում մի կտոր հաց ձաթել, որ ստիպված է երկրէ երկիր թափառել ընտանիքով հանդերձ, ենթարկվելով պանդխտութեան դառն ու դժման պատահարներին:

Բ. Սարգսյանցեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

«Daily News» լրագրի ասելով, Քիւրքեայի ֆինանսական դրութիւնը սաստիկ կրիտիկական է Գանձարանը դատարկ է: Մօտ ժամանակներս տեղի ունեցաւ հետեւեալ դէպքը: Ֆինանսների մինիստրութեան առաջ ժողովել էր ամբողջ մի խաւ բազմութիւն, որ կամենում էր ստանալ իր առնիկը գանձարանից: Ֆինանսների մինիստրը հրամայում է ներս թողնել ամենաբնիկ ընդունաբար, իսկ ինքն յետին դռներով ծածուկ գնում է տուն: Խորհրդանշանները ցրվում է ոտիկանութիւնը:

«Figaro» լրագիրը հաղորդում է, որ սիւրիւն Լաբորի նամակ է ստացել, որի մէջ ասված է, թէ նրա ամուսնուն, որդիներանց և իրան պէտք է սպաննել:

«Figaro» և «Matin» լրագիրներում լոյս է տեսել պաշտօնական հաղորդագրութիւն, որի մէջ ասված է, թէ կառավարութիւնը, առաջվայ պէս, կարծիք չէ համարում առ այժմ դատի ենթարկել այն վկաններին, որոնք կեղծ վկայութիւն են տուել Կրէյֆուսի դործում (այդ կարգադրութիւնը ժամանադրապէս վերաբերում է Մերսիէին), մինչև որ Բէնի դատարանը չը կայացնի իր վճիռը:

«Neue Eerie Presse» լրագիրը հաղորդում է, թէ աւստրիական կայսր Ֆրանց-Յովսէփ իր խորը համոզմունքն է յայտնել Կրէյֆուսի անմեղութեան մասին: Մի և նոյն կարծիքն են յայտնել նաև գերմանական կայսր Վիլհելմ II-ը, իտալական Ումբերտո թագաւորը և չիլիական թագաւորը:

ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 օգոստոսի

Բէնն: Գաւառանի դռնիկակ նիտը բացվեց 6 ժամ 30 րոպէին: Լուսն են Գարամանի ցուցմունքները: Սերբական քաղաքական փախստական Չերնոսելիցի ցոյց է տալիս, թէ Կրէյֆուսի ձերբակալելը մի քանի ժամանակ առաջ, ինքը լսել է մի օտարերկրեայ օֆիցէրից, թէ Կրէյֆուս պատկանում է օտար պետութիւններին: Ֆրանսիայի թղթակիցների թիւին: Օֆիցէրը ցոյց է տուել իրան այն դոկումենտները, որոնք վերաբերում են զորքերի սպառազինութեան և տեղափոխվելուն: Չերնոսելիցի այդ փաստերը հաղորդել է մինիստրութեան մէջ ծառայող մի օֆիցէրին, որը այդ մասին կազմել է արձանագրութիւն: Պետական գործակալը պահանջում է, որ նիտը դռնիկակ լինի՝ Չերնոսելիցի ցուցմունքները երեւոյ համար: Լաբորի յայտնում է, թէ ինքը կը ներկայացնէ իր եղբայրացիներին, որպէս զի բացառովին այն հարցը, թէ արդեօր գոյութիւն ունեցել են և ով է յանձնել այն դոկումենտները, որոնք յիշատակված են բորէրօի մէջ: Տեղի են ունենում երկար վիճաբանութիւն:

Ներ Պէնլէվի և Լաբորի մէջ, որը պնդում է, թէ Պէնլէվ երբեք չէ կասկածել Կրէյֆուսի բարոյականութեան և անմեղութեան մասին: Գօնգ յայտնում է հակառակը:

ԷՍՍԷՆ: «Rheinisch-Westfalisch Zeitung» լրագրի տեղեկութիւնները համեմատ, մինիստր է նշանակվում Կիսելգորֆեան կառավարչական նախագահ—Բէյնթաբէն, իսկ մինիստր Բօստէի տեղը կը գրաւի Վեստֆալայի օբէր-նախագահ Շտուգտ:

24 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հակաժամանախային յանձնաժողովից յայտարարվում է, որ օգոստոսի 6-ին յանձնաժողովի նախագահ պրինց Օլեքսեւիչ-Սկին ճանապարհ է ընկաւ դէպի հիւանդութիւններ եղած տեղը և այնտեղից վերադառնալուց յետոյ, օգոստոսի 22-ին, հաղորդեց յանձնաժողովին հետեւեալ տեղեկութիւնները. առաջին հիւանդանալու դէպք տեղի ունեցաւ Աստրախանի նահանգի Ցարսկի գաւառի Կօլոբովկա գիւղում յուլիսի 16-ին և այդ ժամանակից հիւանդացան 24, մեռան 23 հոգի: Վերջին մահ տեղի ունեցաւ օգոստոսի 12-ին, վերջին հիւանդանալը օգոստոսի 9-ին, և հէնց այդ թիւից էլ մինչև այժմ միայն մէկ հիւանդ կին է մնում, որը ըստ երկրթին առողջանալու վրա է: Հիւանդութիւնը, անկասկած, ուրիշ տեղից բերված է, բայց ճիշտից է ելել, դեռ ևս յայտնի չէ: Տեղի ու տեղը Նորին Բարձրութեան ձեռք առած միջոցները հետեւանքն են. կատարեալապէս չէ դադարեցել Կօլոբովկա գիւղը նրան շրջապատող դաշտերով. բժշկական օգնութիւն հասցնել թէ չէ դադարեցաւ՝ գիւղի բնակիչներին, և թէ չըջապատող ազգաբնակչութեան և հետագոյն Աստրախանի նահանգի ստիտարական դրութիւնը. նկատված է, որ բացի Կօլոբովկա գիւղից, ոչ մի տեղ ոչ մի տարափոխիկ հիւանդութիւն չը կայ: Վերոյիշեալ միջոցները ձեռք առնելու հետ միաժամանակ նկատվեց հիւանդութեան թուլանալը: Հիւանդանալու դէպքեր օգոստոսի 3-ից շատ պակասեցին և ամսի 10-ից դադարեցին: Ինչ վերաբերում է հիւանդութեան բնաորութեան ճիշդ որոշելուն, դրա համար առանձին խորհրդակցութիւն կը կազմվի բժշկական խորհրդի անդամներին և ուրիշ հմուտ անձերից, և այդ խորհուրդը, Նորին Բարձրութեան նախագահութեամբ, իր կարծիքը կը յայտնէ Կօլոբովկայում եղած հիւանդութեան մասին: Այդ կարծիքը իր ժամանակին կը յայտարարվի:

ՊԱՐԻՉ: Կրէյֆուսը Շաբրօ փողոցի վրա անփոփոխ է: Նախագահ Լուբ ստորագրեց այն հրովարտակը, որով բարձրագոյն դատարանը կանչվում սեպտեմբերի 6-ին: Այդ հրովարտակով ընդհանուր պրօկուրոր Բէրնար նշանակվում է պրօկուրորական հսկողութեան ներկայացուցիչ բարձրագոյն դատարանում:

Ոստիկանութիւնը խուզարկութիւն կատարեց Կալվադօսի նալոնախանների խմբի բարտուրար Բրինէի պարկեան ընկարանում, և բազմաթիւ թղթեր ընդհեց: Բրինէ բանտարկվեց:

ԼԻՄԱԹ: Միապետականների կոմիտէի քաղաքապետ Շաբրօյի և նալոնախանների կոմիտէի տի անդամներ՝ Բարբոսէի և Վոտտէի մօտ խուզարկութիւններ կատարվեցին:

ՊԱՐԻՉ: Ընդհանուր պրօկուրորը արդարապէս անմեղութեան մինիստրին ուղարկած գեղութեան մէջ, ի նկատի ունենալով բարձրագոյն դատարան հրաւիրելը, յայտնում է, որ Դեբուլէդի, Կարբէի, Գէրէնի, Կիսելի և ուրիշների դէմ սկսված ընտելութեան հիման վրա, նրանք մեղադրվում են՝ 1) դատաբողութեան մէջ, որին յաջողեցին արդէն կատարված գործողութիւնները կամ սկսվածները, որոնց նպատակն էր նախապատրաստել նրա իրադրոժումը: 2) Դատաբողութեան փորձեր անելու մէջ, որոնք չաջողվեցին միմային մի քանի այնպիսի հանգամանքների պատճառով, որոնք կախում չունէին յանցաւորների կամքից: Ինչ վերաբերում է պատասխանութեանը, որի մէջ մեղադրվում են Գէրէն և նրա ընկերները և սպանութեան փորձ անելուն, դրանք կապ ունեն գաւառութեան և դատադրական փորձերի հետ:

ՊԱՐԻՉ: Հեռաւտի գործակալութեանը բիւլլետենի մէջ պաշտօնապէս հերքվում է չիլիցաբական մի լրագրի հաղորդած այն տեղեկութիւնը, թէ ժամաւարտով հիւանդանալու վեց դէպք է եղել Պարիզի մօլային մի մագաղիմում: Պարիզի սանիտարային պայմանները հրաշալի են:

ԲԵԼԳԻԱ: Այսօր վախճանվեց նախկին մինիստր-նախագահ Բիտտի:

ԲԵԼԳԻԱ: Դատարանական վերաբերեալ գործի վերջնական ընտելութիւնը կը սկսվի վաղը մեղադրական ճառի ընթերցանութեամբ, որի

M. 109486